ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՄԵԾ ՊԱՐՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

«22» ___03___ 2019թ.
հեռ. (0255) 6– 18 - 97
mail: metsparni.lori@mta.gov. am
թիվ ՄՊ-76 /2019

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԸ-Ն Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ղուկասյան

Ձեզ եմ ներկայացնում Մեծ Պարնի համայնքի ղեկավարի 2019 թվականի

թիվ 30-31 որոշումները:

Առդիր 2 թերթ

Մեծ Պարնի համանքի ղեկավար՝ Գ. Պալյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՄԵԾ ՊԱՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Մեծ Պարնի համայնք, գ. Մեծ Պարնի, հեռ.0255 61897
էլ. փոստ՝ metsparni.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«15» մարտի 2019 թ. N 30-Ա

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՀԱՐՈՆ ԻՍՐԱՅԵԼՅԱՆԻՆ ՍԵՂՄՎԱԾ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Ահարոն Իսրայելյանի հայտը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, 4-րդ և 6-րդ կետերով՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ.

1. Մեծ Պարնի համայնքի 24-րդ փողոց 27 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր Ահարոն Իսրայելյանի հայտը բավարարել և նրան տալ սեղմված բնական գազի վաճառքի թույլտվություն 2019 թ. համար:

2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝ Գ. Պալյան

Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՄԵԾ ՊԱՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Մեծ պարնի համայնք, գ. Մեծ Պարնի, հեռ.0255 61897
էլ. փոստ՝ metsparni.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«21» մարտի 2019 թ. N 31-Ա

## ՄԻՍԱԿ ՀՈՎԱԿԻՄՅԱՆԻՆ ՍԵՐՎԻՏՈՒՏԻ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, ՀՀ հողային օրենսգրքի 50-րդ հոդվածի 3-րդ կետի 2-րդ ենթակետով, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005 թ. հունիսի 16-ի թիվ 904-Ն որոշումով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Միսակ Հովակիմյանին գազամատակարարման խողովակաշարերի անցկացման, շահագործման և վերանորոգման համար Մեծ Պարնի համայնքին համայնքային սեփականություն հանդիսացող 06-075-0242-0212 ծածկագրով 0.004 հա գյուղատնտեսական վարելահողի նկատմամբ տրամադրել սերվիտուտի իրավունք և կնքել սերվիտուտի պայմանագիր:
2. Սերվիտուտի իրավունքի ժամկետը սահմանել 50 տարի, տարեկան վճարը սահմանել 1000 դրամ:

Համայնքի ղեկավար՝ Գ. Պալյան